

## Տ. ՄԱՆՈՒԵԼ ՔԱՀԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

(ավազանի անունը՝ Արայիկ)

Ծնվել է 1977 թ. սեպտեմբերի 14-ին ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտում:

1984-1993 թթ. սովորել է տեղի Րաֆֆու անվան թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1994 թ. նոյեմբերի 4-ին Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ վանքում, ձեռամբ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի, ստացել է դպրության չորս աստիճանները:

1995 թ. փետրվարից մինչև 1998 թ. մայիսը ծառայել է ԼՂՀ Պաշտպանական բանակում:

1998 թվականից ծառայության է անցել Արցախի թեմում՝ սպասավորելով Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ առաջնորդանիստ եկեղեցում:

2002 թ. նոյեմբերից մինչև 2004 թ. սեպտեմբերը սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայից պատրաստման լսարանում:

2004 թ. հոկտեմբերի 3-ին Երևանի Ս. Սարգիս եկեղեցում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի:

2004 թ. հոկտեմբերի 10-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ունի երկու զավակ: